



կելու արագութեանն ու փութեանն թափանցանքը շնորհիւ որով նոյն կողմէն եկած վերջին լուրերը կ'անուշանան թէ՛ Լորտ Զէյնաֆօրտ հրամանատարը քանի մը մեծամեծ յաղթութիւններ տարեր է Չուլունքունք դէմ:

Աֆղանի պատերազմը թէպէտ դադար առած է, իսկ անկէ եկած լուրերուն նայելով՝ Շիր Ալի ռուսական սահմաններէն չմտած՝ Պալսի մօտ հիւանդացիներ, ուստի և իր թաշքէնտ բնակիչը ուղեորութիւնը ետ է թողեր:

Հեռագիր մը կրէր անցեալ օր թէ՛ Լորտ Տիւֆէրինի Ս. Բէթլէրսպուրի զրկուելուն նպատակէն է՝ կեդրոնական Ասիոյ մէջ Ռուսիոյ և Անգղիոյ զաւաթադրութեանը տակ գտնուելիք երկիրներուն մէկ սահմանը դժեւում մասին նոր պայմանագրութիւն մը կնքել:

Այս առիթով Գոթման զօրապետին մէկ խօսքը յառաջ կը բերեն, որ քանի է թէ՛ Անգղիայ կրնայ Աֆղանիստանի երկիրն մինչև Հէրաթ իրեն հետ միացնել, վստիքի Ռուսիա կ'արգէ՝ ձայն որ այս երկու կայսրութիւնք սահմանակից ըլլան իրարու:

Օսմ. արժէթղթոց վերածման և նոր փոխառութեան մը ծրագրին քննութիւնը կ'շարունակուի Եւրոպայի մէջ: Վերջին յորերէն սա ստորագրութեան թէ՛ այդ վերածման և փոխառութեան գործողութիւնը պիտի ըլլայ դարձեալ թօքվիլի ծրագրին հիմանքը վրայ, իսկ այս անգամ ոչ թէ թօքվիլի՝ այլ Ռուսիոյ անձանց ձեռքք եւ քիչ մ'աւելի հաստատուն երաշխաւորութեամբ, իսկ Պ. Թօքվիլ իր կողմանէ մէկը Լինտրոյ գրական է, որպէս զի սա ձեռնարկը գումարէ իւր ծրագրին նկատմամբ անգղիացի Պանքասերուն հանած դժուարութեանցը դէմ բողոքելու համար:

Ուրիշ մասնաւոր հեռագիրներ ալ կ'փանուցանեն թէ՛ Բ. Դուռն իմանալով թէ ինչ տեսակ բաներ են յիշեալ ծրագրին գործողութեանը դէմ ելած առարկութիւններն ու արգելքներն, հեռագրեր է Բարիզի օսմ. ղեկավարին թէ պատրաստ է ինքը ուղղակի Պանքասերուն հետ բանակցութեան մտնել թօքվիլի ծրագրին հիմանքը վրայ, որոյ մէջ Բ. Դուռնը կ'հաւանքի հարկ տեսուած փոփոխութիւնք ներմուծելու:

Ուրիշ հեռագիրներ ալ Բարիզէն կ'փանուցանեն թէ՛ պանքասերուն հետ ուղղակի համա-

ձայնութիւն մը ձեռք բերելու յոյս մը չկայ մարտ Յի 17էն առաջ, որն որ Պ. Թօքվիլի արդուած պայմանագրումն, լրման օրն է, 50 միլիոն ֆր.ի առաջին կանխավճարը Օսմ. Գ. անձուհի յանձնելու, ինչու որ պանքասերներն չեն ուզեր եղեր մտնել պայլիսի գործողութեան մը մէջ՝ որոյ մէջ միայն Պ. Թօքվիլ չուսնեն:

Իտալիոյ կառավարութիւնը անկէ առաջ պահանջներ էր Դըրենէն որ թօքվիլի ծրագրին համեմատ բնորոշելով արիւր յանձնաժողովոյ մէջ՝ գաղղ. և անգղ. անգամայն հետ, երկուք ալ իտալացի անդամ բնորոշին, իտալիոյ հպատակաց մէջ ալ օսմ. արժէթղթի ունեցողները զբաղուելուն համար:

Բ. Դուռն այս անգամ պատահանելով իտալիոյ, կըսէ թէ՛ թօքվիլի պայմանագրութիւնը՝ համազգային բլրալու հանգամանք մը չունենալով, մասնաւոր բան մն է, և թէ զայդ ծրագրին ընդունող օսմ. արժէթեւարց մէջ բազմաթիւ իտալացիներ ալ կան, որք կ'ենդունին իրենց շահույթը պաշտպանութիւնը դադը և անգղ. ֆոմիսէրներու յանձնել, և թէ Դուռն ուղղակի և միայն Գաղղիոյ և Անգղիոյ դիմեր էր երկրկու ձեռնհաս անձանց բնորութիւնը խնդրելու, անոր համար որ պայմանագիրը կ'ընդունեն ու փոխառութեան այնպէս ուղեր էին:

Բ. Դուռն այս պատասխանը՝ իտալիոյ պահանջման պարզապէս մերժումն բռն է:

### Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Քաղ. ժողովը երէկ իր սովորական նիստն ընելով ի Ղուլթիա, խորհրդական սրբադատին նախագահութեամբ, մէկ քանի մասնաւոր խնդիրներով զբաղեցաւ, որք յիշատակութեան արժանի կարեւորութիւն մը չունին:

Հաւելան Սոյ կաթողիկոսին առ Պատրիարքարան քաջածմէկ հեռագիրը կ'փանուցանէ թէ, Ուրիշի բանտարկելոց երկուքը հիւանդանալով մէկ ժամու մէջ մեռեր են, և թէ յիշեալ բանտարկելոց մէջ գեա 20 չափ հիւանդ կ'գտնուին եղեր, որոնք բնագոտներ 8 անկողնոյ մէջ պառկեր են:

Կառավարութեան բժիշկն ալ վրայի է թէ՛ հիւանդացի հարկ եղած դարմանն ընելու զանցառութենէն ու անկարելիութենէն յառաջ եկեր է յիշեալ 2 բանտարկելոց մահը, ինչպէս նաև միւսներուն հիւանդութեան պատճառն ալ է ե-

ղիւր բանտին առողջութեան վերանայար հանգամանքը:

Սոյ կաթողիկոսը զասոնք ծանուցանելով Պատրիարքարանին, կ'ընդդէ որ Բ. Դուռն միջոցաւ դարման մը տնօրինուի:

Գաղղիական Տեսաբնութեան անուն թերթն որ Լիւսի մէջ կ'հրատարակուի, իւր վերջին թիւերէն միոյն մէջ Ուրիշի անցից նկատմամբ մայրաքաղաքէս զրուած երկար նամակ մը կը հրատարակէ, որոյ վերջաբանը արժան կ'համարիմք յառաջ բերել Մասիսէն քաղելով:

Գաղղ. Հայոց, այժմէն կը ձեռնարկեն զօրացնել իրենց ազգային գոյութիւնն, Ալ այսուհետեւ իրենց յոյսն իրենց վրայ միայն կուզեն դնել, զի ալ վստած են թուրքերէն: Ուստի, բազմաթիւ բնկերութիւններ կազմուած են Պօլսոյ մէջ, ժողովրդային հանգանակութեամբ դպրոցներ և երկրագործական ու երկրակահատութիւններ կանգնելու համար այն երկրին մէջ՝ որ իրենց օրրանն եղած է, և ուսում ու բարեկեցութիւն ծաւալելու համար ժողովրդային դասերուն մէջ: Մինչև իսկ վարժապետանոց մը հիմնուեցաւ ի վան, Միով բանիւ մրցումն ընդհանուր է Հայ ժողովրդեան մէջ, և օր մը, երբ փրկութեան ժամը հնչէ, Հայք՝ հոծ և հզօր ազգայնութիւն մը կազմելով, իրենց սակաւթիւ բլրալուն հակառակ՝ ազգաց մեծ գերաւորանին մէջ պիտի համուրին, և ալ չպիտի կրնայ բոլի իրենց նկատմամբ, ինչպէս Սասունը յոյս պէ լըսաւ ի Պէրլին՝ վեհաժողովէն դուրս ձգելու համար զանոնք, թէ «Հայք ազգութիւն չունին»: Արեւելոց մէջ քըրիստոնէից պաշտպանն եղող Գաղղիոյ անկէ իրախուսել զանոնք, առաջնորդել և օգնական լինել նոցա՝ այս յառաջդիմական փրկաւէտ գործին մէջ:

### ՄԵՈՅ ՀԱՆՐԱԳԻՐԸ

Մուշէն հետեւեալ հանրագիրը զրկուած ըլլալով յԱզգ. Պատրիարքարան, մէկ օրինակն ալ մեզ զրկուած է, մեր անաչառ անկողնակալութեամբը զայն հրատարակելու խնդրանք, որոյ պատճենն է հետեւեալը:

«Ամեն. Սրբազան Պատրիարք Ազգ. տէր Հայր և Բարեխանամ Տեսաբն կեղր. վարչութեան Ազգ. իս»:

Մշոյ Ս. Կարապետի ուխտիս խաղաղութիւնն քանի տարիէ ի վեր վրդովող հոգեկաւոր վարդապետներէն երկուքն ալ-

դրը զխմելով զանազան ստալոգ հրատարակութիւններ յազարաց տալէն զաւաղ իրենց յոյսն և մէկ յօդուածէ բաղկացեալ տնհիմն սմբաստանութեանց զիր մնալ բնդդէմ վանացս Դեր. վանահօր՝ պատկառելի վարչութեանդ ատենին ներկա, յացնել յանուն օրինաւորութեան և արդարութեան, զոր երբէք ճանցած և գիտցած չեն, մեք ալ Հայր սրբազան, արդարութեան պարտքերնս կատարելու համար՝ մեր խղճի վկայութեամբ կուգամք պատասխանել այն 11 յօդուածոց վրաս հիմնելով բարեխանամ Ատենիդ. արդարաւորութեան վրայ, որ երկարամիտ քաղցրութեամբ կ'լսէք մեր ձայնին զոր ճշմարտութեան համար կ'բարձրացընենք, սակայն նախ քան զպատասխանատուութիւննս՝ կը խնդրեմք ձեր բարձր սրբադատութենէն, որ շնորհ բերէք հարցնել այդ այդ Կարապետ վարդապետին, թէ խրիմեան սրբազանի Պատրիարքութեան օրով, ինչ հարկէ ոտիպեալ ինքն և իր փոխարեան ձեզ վրէժիտ և կեղծքին ապաստանեցան 50 աւուր չափ, ինչ պատճառաւ քահանայապետանութենէ դադրելու վճիռն ընդունեցին ժամանակի կրօնական ժողովէն, որ այդ վճիռն կարծեմք դեռ պաշտօնապէս վերցուած չէ իրենց վրայէն, ինչ ոգիէ շարժեալ՝ «Երեքշաբթի» անունով տետրակն հրատարակեցին խրիմեան սրբազանին դէմ, և ինչու համար երկիցս Ս. Երուսաղէմ քաղաք երթալու դատապարտուեցան, ինչու համար առանց վարչութեան հրամանին, աւելի իրենց ազգեցութեամբ փոխանորդ բնորոշած հանգուցեալ Միլիթար վարդապետի դէմ շարժուն 4 անգամ հակառակելով պատերազմ կ'սանէին, կ'հայհոյէին, կ'նախադէմն և մինչև առաջնորդարանի ահագին բանալիով խեղճին զլուսն պատուելու կը խրիմալին՝ թէ որ միջամտողներ չ'լինէին, այս բաներ բոլոր հիմալ ալ իրենք զիրենք իմաստուն Ստեփան և Ազգի առջև արդարացիելու մասք խրիմեան սրբազանին կ'քննէին, անոր դէմ բրածնին որպէս թէ քաւելով, օրինաւորութեան ու բարեկարգութեան նախանձախնդիր կը հանդիսանան, և անձնական շահասիրութենէ ու կիրքէ յառաջացող խռովութիւնն Ազգ. խնդիր անուանելու չեն պատկառիր:

Կ'մոլաւտանեն զԴեր. Մամբրէ սրբազան, իբր հակառակմանադրական պաշտօնեայ, կաշառառու, կաշառառու, զեղ-

ճող և լն. և լն. Նթէ Մամբրէ սրբազանն հակասահմանադրու- կան պաշտօնեայ է, որ միաբա- նութեան հանրագրութեամբ խնդրուած և 1874 թ. Աղգ. կեդ- րոնական վարչութեան խառն ժողովէն հաստատուած է վա- նահայր, խորմեան սրբազանն, զոր այդ Հայրիկ Հայրիկ ան- ուանելով և չորս քարթիկով կը խնդրեն, ինչ օրինօք քննարուած էր վարդէն ու թն աւուր ճա- նապարհ հեռի եղող Ս. կարա- պետի վանքին վանահայր՝ ա- ռանց նոյն միաբանութեան հա- ճութեան. եթէ ամառատանող վարդապետաց ըսածին պէս են- զու թիւն մը կայ եղիւր Մամբրէ սրբազանի ընտրութեան մէջ (նեւրոյ՛ մեզ բռն), նոյն ատե- ՚նի վարչութեան կ'պատկանի, եթէ կաշառատու եղած է Մամբ- րէ սրբազանն. հարկաւ կ'հե- տեի որ նոյն վարչութիւնն ալ կաշառատու եղած է, ապա թէ ոչ պէտք էր որ ամբաստանողը պարզապէս ցոյց տային ապա- ջողներով թէ Մամբրէ սրբազա- նն որուն կաշառ տուած է և յոյս մէջ՝ կաշառ ընդունած է, այսպէս միմութեան մէջ խոր- խաբիւրով զրպարտիչ բլլալին անտարակուսելի կերպով կ'հաս- տատեն:

Ետունակելի

ԱՅԼԵՆԻ ԱՅԼԻՔ

Կիպրոսի կառավարութիւնը՝ Աղախու և Սե ծովէն գացող նաւուց մօտենալուն դէմ դրած արգելքն անխախտ պահելով՝ միակծորքիոյ նաւահանգիստ- ներէն մեկնող նաւերը 7 աւուր քարանձինայի ենթադրելի որո- շեր է, հանդերձ ծխամօքրու- թեամբ:

— Դրբդ-Քիլիսէի մէջ հըր- դեհ մը պատահելով ամբողջ քաղաքը միւլր դարձեր է կըս- ուի:

— Բերայի թաղապետութիւ- նը միջոցներ ձեռք առեր է ե- դեր Գասթր բաշայի փողոցներն ալ գիշերները կազմով լուսաւո- րելու ինրայի պէս, և թէ այս մասին ինչ ինչ նախապատրաս- տական շինութեանց ձեռնար- կել է եղեր: \*— Իսկ դեռ Պոլսոյ կողմի թաղերուն փողոց- ներն այդպէս մշտնջենաւոր խաւարի ու մթութեան մէջ մը- նալին մինչև ե՛րբ պիտի շա- րունակեն:

— Պատերազմական ատենէն 6 ամիս արտումն դատապար- տեալ Պալադիայի հրամանատար Թէրիք Թայիք բաշա այսօր ճանքու պիտի դուրս Ղօնեա քաղաք երթալու:

— Ժամանակին ներկայ անձ. Կուլթեանն հակառակ, այս տա- ջուան Պօլսոյ բարեկենդանը

ինչքան որ զուարթութեամբ ու փայլուն կերպիւ անցաւ առանց ունէ ցաւայի պարագայի մը, սակայն վախճանը եղբրական դէպքով մը գոցուեցաւ:

Դշ. երեկոյ քանի մը դիւր- կաւոր անձինք, Բերայ Գալեօն- ճու Գուլլուգ, գինետուն մը նստած, կ'իմէին ու կերգէին ահաբեկ եղանակներով: Ոստի- կաններ դալով կիմացնեն այս մարդօց թէ՛ բարեկենդանի հանգէններն նոյն առաւօտ վեր- ջացած բլլալով, այլ ևս ներելի չէր այդ տեսակ ծայանալ պտը- տիլ և գիմակ կրել: Դիմակա- ւորք մտիկ չընելով դարձեալ արեւելք թիւնին կ'շարունակեն Այն ատեն ոստիկանները ճա- րերին հատած՝ կ'հրաւիրեն զանոնք որ մեկնին գինետունէն, իսկ անոնք տեղերէն անդամ- չշարժելով՝ ոստիկանաց դէմ՝ կապաւնան, և արեւալ դիմա- կաւորներէն մին մէջքէն քաշե- լով ընկողմէն՝ կրակ կընէ, ա- սոր վրայ ոստիկանք ալ ոտին գործածելով՝ յարձակողայ մին կըսպաննուի, զոպթէնէն ալ մին կ'վիրաւորուի, վերջապէս զինեալ զօրութիւն վրայ հասնե- լով խռովութիւնը կ'վերջնայ և խռովարարք ձերբակալուե- լով բանտը կ'նետուին:

— Կիպրոսի մէջ անդղիացիք զժուարութեան հանդիպած են արոց հաւաքման մասին, վառն զի կղզւոյն բնակիչներէն ոմանք կ'կարծէին թէ տուրքէ ազատ պիտի բլլային Անգղիոյ կառա- վարութեան ներքե մտնելով: Անգղիացիք ծանր տուրք չեն դներ, բայց որոշուած արոց մամանակին հատուցուիլը կը պահանջեն: Երբ մէկն իր տուր- քը չհատուցաներ, կառավա- րութեան մարդիկ անոր արջա- ուր կամ հողը կ'մաճառեն և տուրքը կառնեն, Անգղիոյ կա- ռավարութեան այս բնթացքը մեծ զայրոյթ պատճառած է յիշեալ կղզւոյն յոյն բնակչաց: Անգղիացոց սկզբունքը սա է թէ օրէնքներն արդար բլլալու են, բայց առանց բացառու- թեան և բառ առ բառ գործա- դրուելու են, այս սկզբունքը նոր է թուրքիոյ ժողովրդեան համար:

— Գերմանիոյ կառավարու- թիւնը ազգային ժողովէն պա- հանջած էր դատաւարի են- թարկել երկու Սօսիալիսթ ե- րեսպիտաններ, վիճարանու- թեան ատեն խիստ լեզու մը գործածած բլլալու յանցանքի բայց ազգային ժողովը միա- ձայն մերժեց կառավարութեան սոյն պահանջը: \*— Այս լուրը զոր հեռագիրը տուած էր, հարկ կ'համարուի կրկնել հոս: մեր երեսպիտանաց ալ դա և օրինակ մ'բլլալու համար:

— Փունջ անցեալ շաբթու կը հաւաստէր թէ Յունաց Պատրի- արքը մէկ քանի բարձրաստի- ճան յոյն եկեղեցականներ մեյ- րաքաղաք հրաւիրեր է, Հայ- կական և Յունական եկեղեցի- ներն իրարու հետ միացնելու միջոցներն խորհելու և զանե- լու համար:

Ստուգուած է թէ Յունաց Պատրիարքը բնաւ այդպիսի նպատակ մը չունենալով, մի- միայն Յունաց Պատրիարքարա- նին ներքին դատաւարական նոր օրէնք և դատաւարական կանոնադրութիւն մը ձրագրել ատելու, ինչպէս նաև յունական դպրոցներու մէջ իրաւաբանու- թեան ուսուցմանը հաստատե- լու նպատակաւ յիշեալ բարձ- րաստիճան եկեղեցականներն մայրաքաղաք հրաւիրեր է:

— Մինչդեռ Գուլուգ տախ- կան երկաթուղիներն բնդառ- ձակելու միջոցները կ'իւրացի- անդին Աստրիոյ կառավարու- թիւնը Հէրսէք—Պոստայի մէջ մէկկողմէն բնդառձակ կառու- զիներ և երկաթուղեաց ճանապ- ներ շինելու վրայ է, սրոնք յա- ռաջիկայ գարունէն սկսեալ բա- նելու պիտի սկսին Էղբու:

ԳՐԱՄԱՅԻՆ

|                      |           |
|----------------------|-----------|
| Հունուր 27.—Ռոց      | 12 1/2    |
| Գոց                  | 12 1/2    |
| Ռոբիդ 27.—Ռոց        | 12 62 1/2 |
| Գոց                  | 12 60     |
| Պուլվար —            | —         |
| Այս առաւօտ բացուեցաւ | 13.33     |
| Թղթադրամ             | 44.00     |
| Բումէլի              | 49.25     |

ՀՆՈՒԱԳՐԱԼՈՒՐՔ

Այս առաւօտ հասած

Հունուր 26.—Օսմ. արժե- տեսարց մանախուսին Բայսօր- ուան գումարման մէջ միաձայ- նութեամբ ընդունեց թօքվիլի ծրագիրը:

Բէթէրսպուրկ 27.—Ժան. տախտէ բռնուող դիւղացի մը փետր. 22ին հրանդանոց բեր- ուեցաւ, Բէթլիներն յայտարա- րեցին թէ թեթեւ է դէպքը, Գիւղացիին հետ առնչութիւն ունեցողներն զգուշութեան տակ գրուեցան:

Թրնովայէն հասած լուրերն յաջող են, Պուլկար ազգ. ժա- ղովը զգաւոր կ'ընդունէ ինքզին- քը, յառաջդիմական մասը Պեր- լինի դաշնագրին հակառակ պահանջութիւններէն ետ կ'իյնայ:

Պուլկար 27.—Թորհրդարանը իր նիստերը մինչև մարտ 27 շա- րունակել որոշեց, երկրին սահ- մանաբութեան վերաբնեւելու և Պերլինը դաշնագրին պայմա- նացը հետ համաձայնեցնելու:

Բարիդ 27.—Գողգ. 5 00 տը- ժեթուղթն այսօր 2 ֆր. բարձ- րացաւ գանձուց պաշտ. Պ.Լ.Լ.Ն Սէ.ի յայտարարութեան վը- րայ թէ կառավարութիւնը միաք- չունի վերածման:

Հունուր 25.—Բէթէրսպուր- կի յորրենտիք դեպքան Լուրտ Տիւֆէրին մեկնեցաւ:

Տէ.լիլ-Թէլէկրաֆ, Պէրլինի մէկ հեռագրին համեմատ կըսէ

թէ Գերմանիա Ռուսիոյ կողմը պիտի բռնէ Տօպրուճայի սահ- մանադժին որոշմանը մէջ:

Գահիրէ 25.—Հապէշատա- նի հետ խաղաղութիւնը կըն- քուեցաւ:

Հասան բաշա իշխանը, խը- աիվին օրդին, եգիպտ. բանա- կաց իբրեւ սպարապետ, Գան- ճուց պաշտ. Պ.Սիլվէր՝ խտի- վին զգաղած ցաւը յայտնեց փետր. 18ի դէպքին պատճա- րաւ:

Պէրլին 25.—Առողջ պահա- կան դիւանին մէկ անդեկագիրը կըսէ թէ ժանտախտը Ռուսիա- յէն բոլորովին անհետացեր է:

Հունուր 26.—Լուրի-Նարոյէ- ան իշխանը վաղը Բօր-Նաթալ կ'մեկնի, Չուլուններուն դէմ ե- ղած պատերազմին ներկայ գա- նուելու:

Թրնովա 26.—Տօնուրօֆ Բօրսաքօֆ իշխանը բացորոշ յայտնեց Աղգ. ժողովին մէջ թէ Պէրլինի դաշնագիրը պիտի զործողութիւն—Թրակիոյ և Մա- կեդոնիոյ Պուլկարաց երեսպի- րաններն մերժեց բնդունել:— Արեւելեան—Բումէլիի Պուլկարաց խնդիրը Խորհրդարանէն չընտ- րուած ուրիշ յանձնաժողովոյ միջոցաւ նկատողութեան պիտի առնուի:

Վիէննա 26.—(Թրնովայէն) Աւստրիական զործակաւորը մերժեց ստորագրել պուլկարաց աղգ. ժողովոյ Ա. հատի առեւեա- գրութիւնը ռուսերէն գրուած բլլալուն համար, զոր չհասկը- նար, սակայն ըսու որ վաւե- րական թարգմանութիւնը տես- նելուն պէս պիտի ստորագրէ:

ՎԵՐՁԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ անգղիական դեսպա- նին տեղապահը Պ. Մէլէթ Բ. Գուռն երթալով, մեծ եպար- դոսն ալ, որ պաշտօնէից ժողո- վոյ կ'նախագահէր, անմիջապէս դուրս ելնելով երկար տեսակ- ցութիւն մ'ունեցաւ Պ. Մէլէթի հետ:

— Կ'հաւաստեն թէ սոյն տե- սակցութեան առարկան է ե- ղեր Թուրքիոյ զանձային խնդ- րոյն վրայօք Բ. Գուռն ինչ ինչ գիտողութիւն հաղորդել, զորս ստացելու է դեսպանը իւր կա- ռավարութեան:

— Երէկ պաշտօնէից ժողո- վոյ գումարումէն առաջ Արաք- զործ. պաշտօնատունը նիստ մը բերեւ է Ա. ստրիոյ հետ կնքուե- լիք պայմանագրութեան մաս- նաժողովը, որ կ'կազմուի Ջիլի կոմսէն, իւր Ա. քարտուղարէն և Արաք. գործ. պաշտ. Գարա- թօտօրի բաշայէն:

— Ատանայի կուսակալ Ջիտ բաշայի դէմ Տաճիկ, Հայ եւ Յոյն բնակիչներէն 10ի չափ բա- տորադրութեամբ բողոքոյ հե- առգիր մը քուլուեր է երկէ մեծ էպարգ ստիւն:

ԸՆԴՀ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ  
ՀԱՄԱՐՈՑ

ԱՂԳՈՑԻՆ ԴՊՐՈՑԱՅ ՀԱՄԱՐ

Գրեց Հ. Գրիգոր Վ. Գովրիկեան  
Մխիթ. Ուսման

Վիեննա Մխիթ. Տպարան 1879

Քաղաքականութիւն.—Միջին ու  
հար Պատմութիւնը՝ մինչև մեր օրեր  
ընդհանրապէս համառոտ բայց կա-  
տարեալ զէպքերն, մասնաւորապէս  
ազգ. դպրոցաց գործածութեանը հա-  
մար շինուած է.—Հաստ հմուտ զը-  
րուութիւն է, ուր յայտնապէս կերկի  
հերմանական ճաշակ ու խորհրդի  
հմտութիւն.—Ստոր արժէքն այնչափ  
աւելի մեծ է, որչափ առաջիններէն  
մէկն է ազգի մէջ, իբրև դասա-  
գիրք վասն զի թէև կայ հաստ մը  
ասկէ 50 տարի առաջ հրատարակ-  
ուած, բայց անկէ, որ զուրկ է  
բոլորովին հաստատուն զրուիքնէ,  
չառ ընդարձակ բունութեամբ է և Պատ-  
մութեան հոգին ու ծածը թող տա-  
լով, աւելի զուարճակաց ու զրոյց.  
նորու միտ զրած է, որ պատմու-  
թեան չէ՛ թէ էական, այլ երկրոր-  
դական, մանաւանդ թէ երրորդական  
մասը կ'ազդեցանեն. Ուրիշ այլևայլ  
տեղեր ու այլևայլ ժամանակ հրա-  
տարակուած պատմութիւնները ամ-  
բողջ չեն, մասնական են, ուստի իբ-  
րև գործածութեան մէջ մտնելի  
զրգեք, հասարակութեան ձեռքը  
զեռ չեն կրնար տրուել.—Ուր թո-  
ղունք որ մատենագիրը, շատ մաս-  
գիր հայեցուած մըրած է նաեւ  
ազգ. պատմութեան, զոր մինչև մեր  
օրերը հասուցած է՝ թուականներու  
հաշիւով համար. Կ'գտնենք ասոր մէջ  
նաև ազգ. մատենագրութեան վրայ  
բաւական տեղեկութիւններ:

Մաքուր տպագրութեամբ 298  
էջ պարունակող սոյն գիրքը, համե-  
մատութեամբ շատ աժան է, 2 ֆը-  
րանք գնով և կը ծախուի Վիեննայի  
Մխիթարեանց գրադատարանին ի  
բանկայթի և ամեն ազգային գրա-  
վճարանաց քով:

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ  
ԱՐԻՒՆԵԼԵԱՆ՝ ՊԱՏԵՐԱԶԱՐԴԻ  
Թարգմանեալ ի Գաղղիականէն

Վերջին տոնկա — ռուսական պա-  
տերապման վրայով գաղղիներէն լեզ-  
ային մէջ մէկ քանի տարբեր հնդի-  
նականութեամբ հրատարակուած գոր-  
ծերէն ամենէն անկողմնակալն ու  
հզորագործունէն Պ. Լը Ֆոնի երկն  
ըլլալով սորա հայեցելն թարգմանու-  
թիւնը տետր առ տետր սկսած է  
հրատարակուել: Արամեան տպագ-  
րութեամբ, մաքուր թղթի վրայ,  
մեծադիր և քաղաքաւոր իւրաքանչիւր  
տետրը 2 պատկերօք զարդարեալ:  
Սոյն հրատարակութիւնը խոստ  
հետաքրքրական եւ միանգամայն  
օգտակար գործ մը ըլլալով, կը հը-  
րաւիրուի յարգող հասարակութիւնը  
մէկ մէկ օրինակ ունենալու անկէ:  
որով թարգման չին աշխատութիւնն  
ու խնամքն արգիւնաւորեալն ալ  
պատճառ մը կրնայ:

Ա. Բ. և Գ. տետրը հրատարակ-  
ուած են: Կերպարանագիրն է ֆը-  
րէկեան գրատունը, զին թերթին  
1 շրջ. արծաթ:

ԱՂԳ-  
ՎԱՃԱՌՈՒՄՈՒՆ  
ԶԳԵՍՏՈՒՅ  
Ֆ. ԿՐԱՆՊԱՌԱՄ և ԸՆԿ.  
ԵՆԸՔԱՆԷ ԳԱՄԱՐԸԹ ԹԻՒ 70

Ղալաթիա

Վիեննայի մէջ շինուած բն-  
տիր տպարաններ կ'աշխատին թէ  
մեծ քանակ և թէ հաստով,  
գոհացուցիչ գիններով:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ  
ՏԵՏԵԱՆ  
ԺՕԶԵՑ ՊԱԼԱՍՄՈ  
ԹԱՐԳԱՆԻՑ

ԿԱՐԱՊԵՏ ԷԹ. ԵՆԶՄԱՆԱՆ  
Աղէյանցի Տիմա գաղղիացի  
մեծանուն վկայատեղի գրչէն ելած  
սոյն գործին ճորջ այն է վերջին հա-  
տորն ալ իզմիրի Տէսէեան եղբարց  
տպարանէն ի լոյս բնծայուելով Պոլս  
հասած է: Այս գեղեցիկ վէպին մէջ  
ուր Լուի Ժոյի կեանքը, վարքն ու  
վախճանը նկարագրուած են, հետ  
զհետէ՝ կ'ներկայանան Վոլթէն և  
Խուսօ՝ անցեալ դարուն այն երկու  
մեծ մարդիկը, թագուն գիտութիւն  
ներ կ'այտնուին, Մասնաց օթեակ-  
ները օտարին առջև կ'ըստին: Ա-  
մեն կարգի և հասակի մարդ լը  
սրած նիւթը հոն կ'գտնէ ևն:  
Կը ծախուի Ենի-ճամի Զինն.  
կիրէր ճատտէսի թիւ 2 Ս. Կուկա-  
սեան գրատունը և ուրիշ գրովա-  
ճառաց քով:  
Գին 2 ֆրանք 25 սնթ.

ԿԻՅԼՈՄ ԹԵԼԼ  
ՈՂԵՐԳՈՒԹ. Ի ՀԻՆԳ ԱՐԱՐՍ  
Թարգմանեալ գաղղիերէնէ

Սէպէլ Ա. Կէլադեան  
ԱՆԴԱՄ  
Քարտուղարաց դիւանին  
Արտաք. գործոց պաշտօնատան  
որ ի Բ. Դուռն  
Շիւթի գերմանացի հռչակաւոր  
հեղինակին ընտիր գործերէն մին  
եղով սոյն ողբերգութիւնը մէկ նոց  
թղթագրամը կը վաճառուի Վ. Գ.  
Մարգարեանի գրատունը Մէրճան-  
Չարը թիւ 51 և ամեն գրավճա-  
ռաց քով:

ՆՈՐ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ  
ԾՅՐԻՆԵՑ Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ  
Կ'ծախուի Ենի-ճամի Զինն.  
կիրէր ճատտէսի թիւ 2 Ս. Կու-  
կասեան գրատունը և ուրիշ գրովա-  
ճառաց քով:  
Գին 1 ֆրանք

ՇԱՐԳ  
ՄՈՒՀԱՐԷՊԵՍԻ ՀԻՔԵԱՅԵՍԻ  
Հեղինակութիւն  
ԱՐԱՊԵՏ ՊԵՏԻ

Վսեմ. Վարդան Պէյի գրչէն  
ելած սոյն ընտիր պատմութիւնը՝ գոր-  
մինչև հիմա թէրճեմանը.—Եֆեհար  
լրագրոյն մէջ մաս առ մաս կը հը-  
րատարակուի, այս անգամ կրկին  
սրբագրութեամբ թերթ առ թերթ  
հրատարակուի սկսած է մաքուր  
տպագրութեամբ, և սրուն ութը և  
րեսէ լայն կացեալ մէկ թերթը 3  
դր. և տաւը թերթերէ բողջացողով  
մէկ մասը 50 դր. և երեք մասերէ  
բողջացողով մէկ հատորը 90 դր. կը  
ծախուի ողջ թղթագրամ:  
մէկ հատորի համար մ'այն բա-  
ժանորդ կրնայ ընդունուիլ կանխիկ  
90 դր. վճարելով:  
Բաժանորդագրութեան տեղն է  
ու Պոլս Սուլթան համար նշան էֆ  
Պէրպէրեանի փողագրատունը, Բե-  
րայ Թարախ Պաշի Համիլամ ընկ.  
գլխարանը: Եւրոպէ, Սարաճեանէ  
չորրորդ Հաճի Կարողիտ Առատուր-  
եան ի խանութը:  
Թերթ առ թերթ կամ մաս առ  
մաս վերագրեալ տեղերէլ գատ՝ հե-  
տեւեալ հոգիներ ալ կը ծախուին:  
Պոլս Լուի Էօնիւ Սուրի Պողոս  
աղայի խանութը, Բերայ Մեծ փողոց  
ժապտառաց խանութները, Թարախ  
Պաշի ժապտառու Անդրէաս աղտի  
խանութը թէ՛ Պոլս և թէ՛ Ղալա-  
թիոյ րապարկագրավճառաց քով:  
Տէր և հրատարակիչ Մէրճան Ս.  
Բիթապէսեան:

Ղալաթիա ԴՇ. 15 ֆետր.

ԸՆԴՀ. ՊԱՐՏ. ԱՐԺ.

|                              |            |
|------------------------------|------------|
| Բաց                          | 13 29      |
| Գոց                          | 13 33      |
| Բարձր գին                    | 13 36      |
| Յած գին                      | 13 28      |
| Թղթագրամ բաց                 | 441 00     |
| բարձր                        | 441 20     |
| ցած                          | 440 20     |
| ժամը 11                      | 441 00     |
| Փոխ. 63ի                     | Փր. 075 00 |
| » 65ի                        | » 079 00   |
| » 69ի                        | » 077 00   |
| » 73ի                        | » 073 00   |
| Գանձատու                     | 24 00      |
| Սուրէթէ Ժէնէրալ              | 4 20       |
| Սուրէթէ Օթման                | 3 00       |
| Պանք ար. Բօնաթ.              | 6 16       |
| Բրէտի Ժէնէրալ                | 5 15       |
| Թրամիլէյ                     | 4 75       |
| Բուժ. Երկաթուղի              | 49 25      |
| ԸՆԴՀ. ԱՅԻՐ ԳՐԱՐԱՐՈՅ          |            |
| (Ու. - Կին 100 ու. 1 հաւել.) |            |
| Անգլ. տկի                    | 109 05     |
| Գաղղ.                        | 87 11      |
| Բօլ                          | 89 13      |
| Քարպոն արծաթ                 | 16 20      |
| » Թղթագրամ                   | 09 00      |
| Բրամիլ                       | 51 10      |
| Հինգնոց                      | 23 20      |
| Մէթալիք                      | 24 10      |
| Ճերմակ մէճիտ                 | 07 08      |
| Պղինձ                        | 182 00     |

ՄԻՆԱՍԵԱՆԻՆ ՄԱՂԱԶԱՆ  
ԳՏՆՈՒԱՄ  
ՈՒ

ՓԱՆԱՍԷ

Կոչուած ցաւի դեղը բոլորովին  
բուսեղեններէ բաղադրուած ըլլալով  
թէ՛ ներսէն և թէ՛ դուրսէն կը գոր-  
ծածուի ու բողջմաթիւ ցաւեր ու հի-  
ւանդութիւններ չուտով կը բժշկէ:  
Ինչպէս որ վարը յիշուած է:  
Ամեն տեսակ Բոլի, Բոտամբը-  
սի, մէլքի կամ լիզիքներու ցաւեր.  
ու նաև Թանջը, Քօլէրա և այլ ա-  
ժառուան հիւանդութիւններ ունե-  
ցողները այս դեղին խմելու են հե-  
տեւեալ կերպով: Կէս գաւաթ լուրի  
մէջ, զիւր սալուրի մը զրգալէն աւելի  
շաքար, վրան ընցուր անուշի զրգալ  
մը փանսաէ աղէկ մը խառնէ ու  
խմէ:  
Կակորդի հիւանդութեանց, և  
Ուսեցի համար դեղը վերայնեալ  
կերպով պատրաստէ ու ժամը կամ  
երկու ժամը հեղ մը՝ մէկ կամ  
երկու անուշի զրգալ այն լաղաղ-  
ութեան հետ խմէ: Գոյացաւ, Բիւնու-  
թիլիմի, Ութի ցաւի, Ստամբուի սկ  
տեսակ տեսակ կանակի ցաւերու հա-  
մար գորսէն փոխառէ քսիլով աղէ-  
մը շիւթուէ է: Կ'ուսայի ցաւի համար  
քիչ մը լաւալակ փանսաէ մէջ  
թաթիլով ցաւած ակուսային վրայ  
գնելու է:  
Ամեն ատեն երրորդ ցաւի մը հա-  
մար գուրսէն փոխառէ քիւր հարկ  
կրկնայ, եթէ քիչ մը ալ խմուի աւե-  
ր շատ բժշկութիւն կը ըլլայ:  
Մարմնոց սղորած կամ ճմուռ-  
ած տեղերը բժշկելու համար վրան-  
զը պատահածին պէս փոխառէին  
վրան աղէկ մը լիցնելու է: Գոտա-  
կով ևն. կորուած վերքերը բժշկե-  
լու համար՝ արեւը չորրորդ շաւտով  
մը վերքը կապելու և ցաւին վրայէն  
փանսաէ լիցնելու է մինչև որ Լաւ մը

Թրջի փանսաէն նաև արեան շրջա-  
նը նարագանջէ ու բոլոր բնութիւնը  
կը զօրացնէ:  
Այս դեղին օգտակարութեանը  
վրայ երկարօ էն զրել աւելորդ կը  
համարեմք, զործածողները զայն  
միշտ կը գովեն, ուզողը կրնայ ան-  
ձամբ փորձել. գինն աժան է: Կը  
ծախուի Մ. Նուսեան և Ընկերաց Ս.  
մերկեան վաճառատունը որ ի Ղա-  
լաթիա Կ. Պօլսոյ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ  
ԵՐԱՌՈՍԱՆ ԿԵՍԱՐԱՅ  
ԳՐՈՒ ՍՈՒԵՏՈՂՈՍԻ  
ԹԻՐԷՆԵՑ Ե. Ս. Ս.

Սոյն պատմութեան յերկրորդ  
և վերջին հատորն ալ իզմիրի  
Տէսէեան եղբարց տպարանէն  
ի լոյս բնծայուելով, կ'ծախուի  
Ենի-ճամի Զինն կիրէր ճա-  
տտէսի թիւ 2 Ս. Կուկասեան  
գրատունը, և ուրիշ գրովա-  
ճառաց քով, Գին 1 ֆրանք 25  
սնթիլով:

ԲԱՆԱԼԻ  
ՀԱՅԵՐԷՆ ԵՐԱՐԱՐՈՒԹԵԱՆ  
ԳՐԵՑ

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ  
Ահաւասակ գեղեցիկ միտոս մը  
Մամուրեան էֆի աշխատակրու-  
թեամբ մուտ գտնելով մարդին լեզ-  
ուի ուսման մէջ, կ'աւաճորդէ ա-  
շակերտները շարադիր լինելու, չըս-  
պասելով որ անոնք քերականութեան  
տաղտկալի շրջանէն անցնին:

Այս գրքից Զ. Կուրիոյ Տէսէ-  
եան եղբարց տպարանէն ի լոյս ըն-  
ծալուելով կը ծախուի Ենի-ճամի  
Զինն կիրէր ճատտէսի թիւ 2. Ա.  
Կուկասեան գրատունը և ուրիշ գր-  
ովաճառաց քով: Գին 50 սնթիլով:

ՆՈՐ ՕՐԱՅՈՅՑ  
1 8 7 9

ԹՈՒԱԿԱՆԻ ՔՐԻՍՏՈՍԻ  
Կ'ծախուի գին 20 փաւա մէճիտ

ԸՆԴԱՐԱՆԻ ՕՐԱՅՈՅՑ  
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ  
1 8 7 9

ԹՈՒԱԿԱՆԻ ՔՐԻՍՏՈՍԻ  
Գին 40 փաւա մէճիտ

ՏԳԷՐԻՆԻ ԶԵՐԵՐԵԱՆ  
15 կենդանադիր պատկերներով  
զարդարեալ սոյն ընդաճակ օրացոյցը  
բաց ի բուն օրացոյցէն. կ'աւարտանկէ  
նաև վերջին Ռուսո—Յաճկական պա-  
տերապման համառոտ պատմութիւնը,  
առողջապահական ամենակարևոր  
գիտելիքներ, բարոյական սկզբունք,  
նեք, խոյթման և այլադի դեղեր,  
փաստակար ճճիւնի շնչելու կերպեր:  
Ասոցմէ գատ ազգային նշանաւոր  
բանաստեղծ Քամառ Բաթիկայի  
«Հոյսերու թաղը» վերագրով մէկ  
շնայնարհիկ ոտանաւորը:  
Կ'ծախուի Զարգարեան վաճա-  
ռատունը, Սուլթան Համաժ փողոց,  
Ալլարճէֆէտի խանի գիմաց, թիւ  
13 և գրովաճառաց քով:

ՏԷՐ ԵՒ ՊԱՏԱՍԻԱՆԱՏՈՒՆ  
ՊՈՂՈՍ ՔՐԻՐԵՃԵԱՆ  
Ղալաթիա. Բէրլէնցէ-Բա-  
զար Պաքըր փողոց թիւ 12.